

**ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ  
ՈՒՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**ԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի ասպիրանտ

Բանալի բառեր. վարկերի ճյուղային կառուցվածք, վարկային ռիսկ, կորելացիայի  
գործակից, ռիսկերի կառավարում

Հայտնի է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողները հետապնդում են տնտեսական օգուտներ՝ կրելով որոշակի ռիսկեր: Մյուս կողմից, որքան մեծ են գործունեությունից սպասվող օգուտները, այնքան մեծ են ռիսկերը: Առևտրային բանկերի գործունեությունը դասվում է ձեռնարկատիրության հնագույն ձևերին և ևս պարունակում է ռիսկի որոշակի մակարդակ: Սույն աշխատանքում կորելացիայի գործակիցի և վարկերից հավանական կորուստների պահուստների օգնությամբ փորձ է արվում գնահատել վարկավորած ճյուղերում ռիսկերի կուտակումն ամբողջ բանկային համակարգի հրապարակված տվյալների հիման վրա, որը առանձնակի կարևորություն կունենա յուրաքանչյուր բանկի վարկային ռազմավարության մշակման համար:

Բանկի<sup>1</sup> ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրից և արդյունավետությունից բացի մեծապես կախված է նաև ռիսկերի գնահատման և կառավարման համակարգից: Այդպիսի արդյունավետ համակարգը տնտեսական վերելքի փուլում կնպաստի կայուն զարգացմանը, իսկ անկման փուլում կնվազեցնի հավանական կորուստների մեծությունը: Նման զարգացումներն էլ հանդիսանում են ֆինանսական կայունության գաղափարի սպասվելիք դրսևորումները:

Օլդֆիլդի և Սանտոմերոյի աշխատանքում<sup>2</sup> նշվում է, որ ֆինանսական կառույցներն ընդհանրապես առնչվում են երեք խումբ ռիսկերի հետ՝

- ռիսկեր, որոնցից կարելի է խուսափել պարզ բիզնես պրոցեսների միջոցով,
- ռիսկեր, որոնք հնարավոր է փոխանցել այլ մասնակիցների,
- ռիսկեր, որոնք պետք է ակտիվորեն կառավարվեն կազմակերպության ներսում:

Ռիսկից խուսափելու պրակտիկան ենթադրում է հիմնականում երեք տեսակի գործողություններ: Դրանցից առաջինը բիզնես գործընթացների և պայմանագրերի ստանդարտացումն է, որը հնարավորություն է ընձեռում

<sup>1</sup> Այսուհետ ի նկատի ունենք առևտրային բանկը:

<sup>2</sup> Տե՛ս G. Oldfield, A. Santomero, The Place of Risk Management in Financial Institutions, Financial Institutions Center, Wharton, 1995.

կազմակերպությանը խուսափել անարդյունավետ և սխալ ֆինանսական որոշումների կայացումից: Հաջորդ քայլը պորտֆելների ձևավորման ժամանակ փոխառուների դիվերսիֆիկացիան է, ինչը կրճատում է կորուստների շղթայական տարածումը: Վերջապես կազմակերպության աշխատակիցները պետք է պատասխանատու լինեն որոշումների կայացման համար: Վերոնշյալ բոլոր քայլերը կազմակերպությանը ուղղում են ֆինանսական մի վիճակի, երբ առկա են բանկային գործունեությունից բխող օպտիմալ ծավալի ռիսկեր:

Ինչպես արդեն նշվեց, գոյություն ունեն նաև փոխանցելի ռիսկեր: Օրինակ տոկոսադրույքի ռիսկը հնարավոր է փոխանցել տոկոսադրույքի տարբեր գործիքների միջոցով, ինչպիսին են սվոփները և այլ ֆինանսական ածանցյալները: Տարբեր ֆինանսական ինստիտուտներ ռիսկերի կառավարման ոլորտում ունեն իրենց առավելությունները, այդ պատճառով նպատակահարմար չէ, որ բանկն ինքը կրի այդ ռիսկերը:

Այնուամենայնիվ, գոյություն ունեն առնվազն երկու խումբ ակտիվներ, որոնցից բխող ռիսկերը պետք է կրի բանկը: Առաջին խումբը ներառում է բարդ և յուրահատուկ ռիսկեր կրող ակտիվները: Ըստ Բերգերի և Ուդելի<sup>3</sup> առկա են ֆինանսական գործիքներ, որոնք ներկայացված չեն երկրորդային շուկաներում և հնարավոր չէ ռիսկերի փոխանցումը: Այդպիսի ակտիվների ռիսկերի կառավարումը դառնում է բանկերի մասնագիտական գործունեության կարևոր մասը: Երկրորդ խումբը ներառում է գույքային ակտիվները: Դրանք հանդիսանում են վարկերի վերադարձելիության հիմնական երաշխիքները, այդ պատճառով պետք է ունենալ գույքի գնահատման և իրացման արդյունավետ համակարգեր, որպեսզի վարկային ռիսկը չդառնա կորուստների խոշորագույն պատճառ:

Ռիսկերի վերոնշյալ դասակարգումը կատարվում է ըստ բնույթի, իսկ ըստ տեսակի բանկային բիզնեսում ռիսկերը հիմնականում բաժանվում են՝


- համակարգային կամ շուկայական ռիսկի,
- վարկային ռիսկի,
- գործընկերոջ ռիսկի,
- իրացվելիության ռիսկի,
- գործառնական ռիսկի,
- իրավական ռիսկերի:

Ակնհայտ է, որ ռիսկերի նման դասակարգումը միակը չէ, սակայն այն ներկայացնում է ոլորտում դրսևորվող ռիսկերը համընդունելի խմբերով:

Բերված ռիսկերից Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի համար առավել կարևոր է վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործընթացը, քանի որ այստեղ բանկային գործունեության

<sup>3</sup> Տե՛ս A. Berger, G. Udell, Lines of Credit and Relationship Lending in Small Firm Finance, Financial Institutions Center, Wharton, 1994

մասնագիտական ուղղությունը վարկավորումն է: 2015թ. նոյեմբերի դրությամբ ՀՀ առևտրային բանկային համակարգի ընդհանուր ակտիվները կազմում է 3,263,764 մլն. ՀՀ դրամ, վարկերը՝ 2,100,522 մլն. ՀՀ դրամ, որը կազմում է ընդհանուր ակտիվների մոտ 64 տոկոսը<sup>4</sup>:



**Նկար 1.** ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկեր, ընդհանուր վարկեր հարաբերակցություն

Նկար 1-ում ներկայացված է ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկեր, ընդհանուր վարկեր հարաբերակցությունը: Նկատելի է, որ 2008թ. սկիզբ առած ճգնաժամը էապես ազդել է խնդրահարույց վարկերի ծավալի մեծացման վրա: ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը ևս նպաստավոր չէ վարկերի աշխատունակության իմաստով: Այսպիսի վիճակագրությունը մեկ անգամ ևս ապացուցում է վարկային ռիսկի ուղղությամբ իրականացվելիք վերլուծությունների արդիականությունը մի կողմից, մյուս կողմից, բանկերում վարկերի գնահատման և կառավարման առավել արդյունավետ մոտեցումների անհրաժեշտությունը:

Հայաստանում գործող բանկերի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարկային ռիսկի ռազմավարության մշակման և ամրագրման իմաստով դրանք քաղաքականությունները առաջավոր աշխարհում ընդունված մոտեցումներին շատ նման են: Սակայն հիմնական տարբերությունը կայանում է ամրագրված ռազմավարության իրականացման գործընթացում: Վարկի տրամադրումն իրականացվում է հիմնականում վարկունակության գնահատման հիման վրա, իսկ ապահովության միջոցները գրավն է և երաշխավորությունները: Այստեղ բաց է մնում վարկային ռիսկի կառավարման շատ կարևոր մաս՝ վարկի ընթացիկ դիտարկումը Հայաստանում, որը բանկին պետք է հնարավորություն ընձեռի վարկառուից

<sup>4</sup> Տե՛ս [www.cba.am](http://www.cba.am) ՀՀ ԿԲ կայքում:

շուտ հայտնաբերել ապագայում սպասվելիք խնդիրները: Սա թվում է վերանբարձ գաղափար, սակայն ինչպես արդեն նշվել է, վարկային ռիսկը բանկի համար մասնագիտական ուղղություն է: Դա նշանակում է, որ բանկը երբեմն պետք է հաճախորդից առավել լավ տեղեկացված լինի վերահաս ռիսկերի մասին՝ հիմնվելով տնտեսության, դրա ճյուղերի և ոլորտների վերաբերյալ գիտելիքների և տիրապետած վիճակագրության վրա:

Մինչ 2008թ. վարկային ռիսկի կառավարումը կարելի էր համարել արդյունավետ, քանի որ ապահովության միջոցը՝ հիմնականում անշարժ գույքը, անընդհատ թանկանում էր: Եվ եթե անգամ վարկառուն չէր սպասակում վարկը, ապա գրավի իրացումը դառնում էր խնդրի լուծման երկկողմանի շահավետ տարբերակ: Սակայն այս իրավիճակը կտրուկ փոխվեց անշարժ գույքի գների անկման պատճառով: Ինչպես երևում է տարածաշրջանային մակրոտնտեսական զարգացումներից, անշարժ գույքի գների նախկին աճողական դինամիկան չի վերականգնվի: Սա, իր հերթին, նշանակում է, որ բանկերը վարկավորման քաղաքականությունը պետք է փոխեն:

Վարկային ռիսկի ուսումնասիրությունն ընդհանրապես տնտեսությունում գործող բոլոր բանկերի համար չի կարող ուղղված լինել կոնկրետ վարկերի ռիսկի գնահատմանը, քանի որ այդ պարագայում գործ ունենք բանկային գաղտնիքի հետ: Այսինքն գնահատականները պետք է տրվեն հրապարակվող ցուցանիշների հիմքերի վրա:

Ինչպես արդեն նշվել է, վարկային ռիսկի կառավարումը սկսվում է վարկի տրամադրման գործընթացից: Իսկ վարկի տրամադրումը հիմնականում համապատասխանում է բանկի վարկավորման քաղաքականությանը: Այդ քաղաքականությունը սկսվում է տնտեսության ճյուղերի ընտրությունից: Տնտեսության ճյուղի սուբյեկտներին վարկավորելիս բանկը իր ակտիվներում ներառում է ճյուղից բխող ռիսկերը: Հայտնի է, որ ՀՀ բանկերն իրականացնում են պահուստավորում վարկերի համար՝ կախված դասակարգումից: Եթե բանկն ունի մեծ ծավալի դասակարգված վարկեր, ապա վարկերի գծով հավանական կորուստների պահուստը մեծ կլինի<sup>5</sup>: Սա նշանակում է, որ որքան նշված պահուստավորումը մեծ է միավոր վարկի հաշվով, այնքան բանկի բանկային ռիսկի կառավարման համակարգը թույլ է<sup>6</sup>: Ստորև՝ աղյուսակ 1-ում ներկայացվում է ՀՀ բանկերի՝ վարկերից հավանական կորուստների պահուստների և վարկերի ծավալների հարաբերությունները:

Ամերիաբանկը այս ցուցանիշի գծով լավագույն դիրքն է զբաղեցնում, իսկ Բիբլոս Բանկը՝ վատագույն: Եթե ուշադիր ուսումնասիրենք աղյուսակը,

---

<sup>5</sup> Այստեղ հաշվի չի առնվում բանկի կամավոր պահուստավորումը, քանի որ այն էապես չի շեղվում ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահուստավորման սահմանաչափերից:

<sup>6</sup> Որպես գնահատական դիտարկվում է պահուստի և վարկերի հարաբերությունը, որպեսզի չեզոքացվի բանկերի մասշտաբների տարբերությունը:

ապա պարզ կդառնա, որ միավոր վարկի գծով պահուստի մակարդակը կախված չէ բանկի մեծությունից, ինչը օրինաչափ չէ, քանի որ մեծ բանկերը պետք է ունենան վարկային ռիսկի կառավարման մասնագիտական բարձր մակարդակ՝ ունենալով ֆինանսական և կադրային մեծ հնարավորություններ:

Փոքր բանկերը հիմնականում ուղղում են իրենց գործունեությունը վարկավորմանը, քանի որ այլ ֆինանսական միջնորդությունների լայն հնարավորություններ չունեն: Սա իր հերթին նշանակում է, որ ակտիվ և ռիսկային վարկավորումը կբերի վարկային ռիսկի կուտակմանը: Ի հակադրում այս մոտեցմանը՝ ՀՀ որոշ փոքր բանկերի վարկային ռիսկերի կառավարումը մրցակցում է խոշոր բանկերի համակարգերի հետ:

**Աղյուսակ 1.** Վարկերից հավանական կորուստների պահուստի և վարկերի հարաբերությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Կարգաթիվ	Բանկ	Պահուստ/Վարկ(տոկոս)
1	Ամերիաբանկ	0.97
2	Մելլաթ Բանկ	1.36
3	Հայէկոնոմբանկ	1.39
4	Պրոմեթեյ Բանկ	1.51
5	Ինեկոբանկ	1.65
6	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	1.78
7	Արդշինբանկ	2.00
8	Հայբիզնեսբանկ	2.26
9	ՊրոԿրեդիտ Բանկ	2.29
10	Արարատ բանկ	2.40
11	Անելիք Բանկ	2.64
12	ԲՏԱ Բանկ	2.92
13	Արմսվիսբանկ	3.21
14	Կոնվերս բանկ	3.36
15	Յունիբանկ	3.66
16	Զարգացման Հայկական Բանկ	3.98
17	ՎՏԲ-Հայաստան Բանկ	4.21
18	ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	5.27
19	Արցախբանկ	5.65
20	Առէկսիմբանկ	6.17
21	Բիբլոս Բանկ	8.28

Որպեսզի բացահայտենք, թե տնտեսության տարբեր ճյուղերի վարկավորումն ինչպես է ազդում վարկային ռիսկի վրա, ուսումնասիրենք վարկերից հնարավոր կորուստների պահուստի կախվածությունն այդ ճյուղերին տրված

վարկերի մեծություններից: Այստեղ կարելի էր կիրառել ռեգրեսիոն վերլուծություն, սակայն պահանջվող վիճակագրական տվյալները բավարար չեն<sup>7</sup>:

Փոխարենը կօգտագործվի կորելացիայի գործակիցը, որը ցույց է տալիս տվյալների երկու շարքերի միջև կախվածության ուղղությունը և ուժգնությունը<sup>8</sup>: Ինչպես վերևում նշվեց, վարկերի ճյուղային կառուցվածքն էական ազդեցություն ունի վարկային ռիսկի վրա: Այդ նպատակով կառուցենք ճյուղային վարկեր և պահուստներ գրաֆիկները: Բանկերն իրենց վարկերի ճյուղային կառուցվածքը ներկայացնում են առևտուր, մանրածախ առևտուր, մեծածախ առևտուր, շինարարություն, անշարժ գույք, էներգետիկա, էլեկտրաէներգիայի արտադրություն, գյուղատնտեսություն և անտառապահություն, արդյունաբերություն, արտադրություն, սննդի և խմիչքի արտադրություն, տրանսպորտ և կապ, ծառայություններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հիպոթեքային, սպառողական և այլ վարկային հոդվածներով: Բայց քանի որ այս հոդվածները բոլոր բանկերի հաշվետվություններում գոյություն չունեն, ապա պետք է հոդվածները խմբավորել և ներկայացնել հիմնական՝ առևտուր, շինարարություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, սպառողական և այլ ճյուղերի միջոցով:


**Աղյուսակ 2. Բանկերի համարները սույն հետազոտության համար:**

Համար	Բանկ	Համար	Բանկ
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ	12	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ
2	Ամերիաբանկ	13	ԻՆԵԿՈԲԱՆԿ
3	Ամելիք Բանկ	14	Կոմվերս բանկ
4	Առէկսիմբանկ	15	Հայբիզնեսբանկ
5	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	16	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ
6	Արդշինբանկ	17	Մելլաթ Բանկ
7	Արմսվիսբանկ	18	Յունիբանկ
8	Արցախբանկ	19	ՊրոԿրեդիտ Բանկը
9	Բիբլոս Բանկ	20	Պրոմեթեյ Բանկ
10	ԲՏԱ Բանկ	21	ՎՏԲ-Հայաստան Բանկ
11	Զարգացման Հայկական Բանկ		

Նկար 2-ում ներկայացված են ՀՀ-ում գործող բանկերի առևտրի ոլորտում տրված վարկերը և վարկերից հավանական կորուստների պահուստի<sup>9</sup>

<sup>7</sup> Պայմանավորված է բանկերի քիչ քանակով և հրապարակվող վիճակագրության անհամատեղելիությամբ:  
<sup>8</sup> Տե՛ս Neil A. Weiss, "Introductory Statistics" Arizona State University, Addison-Wesley, 2012, pp. 656-660.  
<sup>9</sup> Գրաֆիկներում ներկայացված է վարկերից հավանական կորուստների ամբողջ պահուստը, ոչ թե յուրաքանչյուր ոլորտի վարկերի գծով, քանի որ նման տվյալներ կարելի է գտնել երկու բանկերի հրապարակային հաշվետվություններում: Գրաֆիկների աբսցիսում ներկայացված են տվյալ ոլորտի վարկերը, օրդինատում՝ պահուստները:

տվյալները խաչաձև գրաֆիկի տեսքով: Կորելացիայի գործակիցը հավասար է 0.33, ինչը նշանակում է, որ նշված երկու գործոնների մեջ առկա է թույլ դրական կախվածություն (տես աղյուսակ 2-ը): Աղյուսակ 2-ում ներկայացված են բանկերի համարներ, որոնք կիրառվում են բերված խաչաձև գրաֆիկներում:




Սկար 2. Առևտրի ոլորտի վարկեր-պահուստ:

Առևտրի ոլորտում տրված վարկերի և պահուստների թույլ կորելացիան ճշգրիտ է մինչև 2014թ.: 2015թ. աչքի է ընկնում առևտրի կտրուկ անկումով:

Աղյուսակ 2. Կորելացիայի գործակիցը և նշանակությունը


<i>Դրական կորելացիա</i>		<i>Քացասական կորելացիա</i>	
Գործակիցը	Նշանակությունը	Գործակիցը	Նշանակությունը
0,00-0,19	շատ թույլ	-0,00-(-0,19)	շատ թույլ
0,20-0,39	թույլ	-0,20-(-0,39)	թույլ
0,40-0,59	միջին	-0,40-(-0,59)	միջին
0,60-0,79	ուժեղ	-0,60-(-0,79)	ուժեղ
0,79-1,0	շատ ուժեղ	-0,79-(-1,0)	շատ ուժեղ

Հաջորդը շինարարության ոլորտն է, որի խաչաձև գրաֆիկը ներկայացված է նկար 3-ում: Կորելացիայի գործակիցը՝ 0,54, ինչը վկայում է միջին դրական կորելացիայի մասին: Այս արդյունքը հիմնավորվում է 2008թ. սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ հայտնի է, որ այդ ճգնաժամից առավելապես տուժել է շինարարության ոլորտը:



**Նկար 2.** Շինարարության ոլորտի վարկեր-պահուստ:

Նկար 3-ում ներկայացված է գյուղատնտեսության ոլորտի վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկը: Այդ երկու փոփոխականների կորելացիայի գործակիցը՝ 0,75 վկայում է ուժեղ դրական կորելացիայի մասին. սա հիմնավորվում է այն հանգամանքով, քանի որ գյուղատնտեսության ոլորտը բարձր ռիսկային է համարվում: Այստեղ նկատելի է դառնում, որ ոլորտի պետական երաշխիքները էապես չեն նպաստում ռիսկերի կրճատմանը:




**Նկար 3.** Գյուղատնտեսության ոլորտի վարկեր-պահուստ:

Նկար 4-ում ներկայացված է արդյունաբերության ոլորտի վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկը: Գրաֆիկից պարզ է դառնում, որ ոլորտը հիմնական վարկավորում են խոշոր բանկերը՝ Ամերիաբանկը, Էյչ-Էս-Բի-Սի Բանկը, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը և այլն: Այս ոլորտում կորելացիայի գործակիցը 0,33, ինչը վկայում է թույլ դրական կորելացիայի մասին: Սա բացատրվում է վարկառուների խոշորությամբ, քանի որ արդյունաբերության




ուլորտի հիմնական վարկառուները հանքարդյունաբերության ընկերություններն են, որոնք պարտաճանաչ են իրենց պարտավորություններում:



**Սկար 4.** Արդյունաբերության ոլորտի վարկեր-պահուստ:


Ներկայացված սպառողական վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկում կորելացիայի գործակիցը՝ 0,81 վկայում է ուժեղ դրական կորելացիայի մասին, ինչը բացատրվում է որոշ բանկերի ռիսկային սպառողական վարկավորմամբ՝ առանց վարկունակության գնահատականի և երաշխիքների:



**Սկար 5.** Սպառողական վարկեր-պահուստ:

Սպառողական վարկերի տրամադրման նման մոտեցումը էապես վտանգում է հասարակության ընդհանուր վարկունակությանը: Այսպիսի քաղաքականությունը երաշխավորողների ինստիտուտի միջոցով նաև վնասում է այլ պոտենցիալ վարկառուների, որոնց վարկային պատմությունը տուժում է բանկերի և վարկառուների անհետևողական վարքի հետևանքով: Սկար 6-ում ներկայացված ճյուղային հստակ կառուցվածք չունեցող վարկեր/պահուստ կորե-

լացիան՝ 0,18 թույլ է, ինչը վկայում է, որ բանկերի ոչ որակյալ վարկերը չեն կուտակել այլ վարկերի դասակարգման մեջ:



**Նկար 6.** Այլ վարկեր-պահուստ

Ստորև հաշվարկված է ՀՀ բանկային համակարգի ճյուղային վարկավորման և պահուստների կորելացիայի գործակիցները (աղյուսակ 3), որոնք թույլ են տալիս գնահատել յուրաքանչյուր ճյուղի ազդեցության հարաբերական ուժգնությունը վարկավորման հետևանքով ձևավորված հավանական կորուստների պահուստի վրա:

**Աղյուսակ 3.** ՀՀ բանկային համակարգի ճյուղային վարկավորման և պահուստների կորելացիայի գործակիցները

Համար	Տնտեսության ճյուղ	Կորելացիայի գործակիցը
1	Սպառողական	0,81
2	Գյուղատնտեսություն	0,75
3	Շինարարություն	0,54
4	Առևտուր	0,33
5	Արդյունաբերություն	0,33
6	Այլ	0,18

**Եզրակացություն:** Կարելի է նշել, որ վարկային ռիսկի գնահատումը ճյուղային կառուցվածքի իմաստով հնարավոր է իրականացնել կորելացիայի գործակցի օգնությամբ: Այս գործակիցների մշտադիտարկումը հնարավորություն կտա բանկային համակարգի սուբյեկտներին հարաբերության մեջ գնահատել տնտեսության ճյուղերի վարկավորման ռիսկայնությունը: Ակնհայտ է, որ առանձին բանկերը տիրապետում են իրենց տրամադրած վարկերի առողջության դինամիկան: Սակայն սույն հետազոտությունը թույլ կտա վարկավոր-

ման նոր քաղաքականություն մշակելիս հաշվի առնել ամբողջ բանկային համակարգի առկա փորձը:

### **Լենա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

#### **ՀՀ բանկային համակարգի ճյուղային վարկավորման ռիսկայնության հարաբերական գնահատում**

*Բանալի բառեր. վարկերի ճյուղային կառուցվածք, վարկային ռիսկ, կորելացիայի գործակից, ռիսկերի կառավարում*

Հողվածում կորելացիայի գործակիցի և վարկերից հավանական կորուստների պահուստների օգնությամբ փորձ է արվել գնահատել վարկավորած ճյուղերում ռիսկերի կուտակումը: Ուսումնասիրվել է նաև ՀՀ բանկերի՝ վարկերից հավանական կորուստների պահուստների և վարկերի ծավալների հարաբերությունները: Արդյունքում կորելացիայի գործակիցների մշտադիտարկումը հնարավորություն կտա բանկային համակարգի սուբյեկտներին հարաբերության մեջ գնահատել տնտեսության ճյուղերի վարկավորման ռիսկայնությունը: Սույն հետազոտությունը թույլ կտա վարկավորման նոր քաղաքականություն մշակելիս հաշվի առնել ամբողջ բանկային համակարգի առկա փորձը:

### **Лена АЙРАПЕТЯН**

#### **Относительная оценка риска отраслевого кредитования банковской системы РА**

Ключевые слова: отраслевая структура кредитов, кредитный риск, коэффициент корреляции, управление рисками

В статье сделана попытка оценить накопление риска в кредитованных отраслях с помощью коэффициента корреляции и резервов вероятных убытков от кредитов. Были исследованы также соотношения резервов вероятных убытков от кредитов банков РА и объемы кредитов. В результате, постоянный мониторинг коэффициентов корреляции позволит субъектам банковской системы произвести относительную оценку риска кредитования отраслей экономики. Отдельные банки владеют динамикой всех предоставленных ими кредитов, однако настоящее исследование позволит учесть имеющийся опыт всей банковской системы при разработке новой политики кредитования.

### **Lena HAYRAPETYAN**

#### **Relative assessment of risk of branch crediting in bank system of RA**

*Key words: branch structure of credits, credit risk, correlation ratio, risk management*

An effort to assess accumulation of risk in the credited branches using the correlation ratio and reserves of probable losses from credits is undertaken in this article. The correlation between the reserves of probable credit losses of the banks of RA and credits' amounts was examined as well. As a result, the permanent monitoring of the correlation ratio will enable the subjects of the banking system to relatively assess the risk of crediting of the branches of economy. Individual banks possess the dynamics of all credits provided by them but this research allows to take into account whole experience of the banking system available at present at development of new crediting policies.